



ՄաստերՔարտ-ով իրականացվող գործարքների սահմանափակում սանկցիաների ենթարկված որոշ երկրներում

Հարգելի Հաճախորդ,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կարևորելով Էյչ-Էս-Բի-Սի Խմբի և ՄաստերՔարտ վճարային համակարգի կողմից միջազգային պատժամիջոցներին համապատասխանելու պարտավորությունները, սահմանափակել է Բանկի կողմից տրամադրված ՄաստերՔարտ կրեդիտ քարտերով կատարվող կանխիկ և անկանխիկ գործարքների իրականացումը միջազգային պատժամիջոցների ենթարկված հետևյալ երկրներում՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, Սիրիա, Հյուսիսային Կորեա և Ղրիմ: Սահմանափակվել է նաև Կուբայի Հանրապետությունում ԱՄՆ դոլարով ՄաստերՔարտ կրեդիտ քարտերով իրականացվող գործարքների կատարումը: Սահմանափակումներն ուժի մեջ են մտնում 2015 թվականի օգոստոսի 3-ից:

Հարցերի դեպքում այցելեք Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք **+374 (60) 655 000** մեր Հեռախոսային կենտրոնին միանալու համար:

Շնորհակալություն մեր ծառայություններից օգտվելու համար:
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Թարմացվել է՝ 14/01/2019 15:00